Հավելված
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
26.02.2020թ. թիվ 39-Լ որոշման

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շիրակի մարզում մարզային համակարգողի ընտրության համար փաստաբանների ժողով հրավիրելու մասին

ք. Երևան, Զաքյան 7-2 26.02.2020թ.

Հարգելի՛ փաստաբան,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ 2020 թվականի մարտի 14-ին Շիրակի մարզ, ք. Գյումրի, Անկախության հրապարակ 9 հասցեում (ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի Գյումրի քաղաքի նստավայր) Շիրակի մարզի մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ հրավիրվելու է Շիրակի մարզի փաստաբանների ժողով (մարզի փաստաբանների համատեղ հավաք, այսուհետ՝ Ժողով):

1. Քվեարկությունը սկսվում է **2020 թվականի մարտի 14-ին ժամը 16:00-ին և ավարտվում է նույն օրը՝ ժամը 16:30-ին:**
2. Մարզային համակարգողի **թեկնածուների ինքնաառաջադրումը սկսվում է 2020 թվականի փետրվարի 26-ին և ավարտվում է 2020 թվականի մարտի 2-ին, ժամը 18:00-ին:**
3. Քարոզչությունը սկսվում է **2020 թվականի մարտի 7-ին և ավարտվում է 2020 թվականի մարտի 12-ին:**
4. Մարզի յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**
5. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**
6. Քվեարկության գաղտնիությունը ընտրող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն:
7. Համակարգողի թեկնածուի առաջադրումը կատարվում է հաշվիչ հանձնաժողովին ինքնաառաջադրման մասին դիմում ներկայացնելու կարգով:
8. Ինքնաառաջադրվելու իրավունք ունի յուրաքանչյուր՝ արտոնագիրը չկասեցրած փաստաբան, ով՝

ա) հաշվառված է և գործունեություն է իրականացնում (ունի փաստաբանական գրասենյակ կամ աշխատում է փաստաբանական գրասենյակում կամ որպես փաստաբան հիմնականում գործում է) մարզում,

բ) տիրապետում է համակարգչային հմտություններին (կարողանում է վարժ օգտվել առաջին անհրաժեշտության համակարգչային ծրագրերից, այդ թվում՝ MS Word ծրագրով կազմել տեքստ, ինչպես նաև օգտվել համացանցից):

9. Փաստաբանը կարող է որպես համակարգող ընտրվել միայն մեկ մարզում:
10. Մարզային համակարգողի թեկնածու չեն կարող ինքնաառաջադրվել

Պալատի նախագահը, Պալատի խորհրդի անդամները, ինչպես նաև նույն կարգով նախատեսված վստահված անձինք և հաշվիչ հանձնաժողովի անդամները:

11. Ինքնաառաջադրման մասին դիմումը պետք է պարունակի՝

- թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը.
- թեկնածուի բնակության վայրը, հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն.
- թեկնածուի աշխատանքի կամ գործունեության վայրը և պաշտոնը (զբաղմունքը).
- համակարգչային գիտելիքներ ունենալու վերաբերյալ նշումը.
- թեկնածուի արտոնագրի համարը.
- թեկնածուի ստորագրությունը:

12. Թեկնածուների ինքնաառաջադրման համար սահմանված ժամկետի ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովը մեկ օրվա ընթացքում ընդունում է որոշում թեկնածուին գրանցելու կամ գրանցումը մերժելու մասին: Թեկնածուի գրանցման պահից, վերջինս ձեռք է բերում քարոզարշավին և ընտրությանը մասնակցելու իրավունք:

13. Թեկնածուի գրանցումը մերժվում է, եթե թեկնածուն հաշվառված չէ կամ գործունեություն չի իրականացնում համապատասխան մարզում, կամ առկա է սույն կարգով նախատեսված թեկնածությունը բացառող այլ հանգամանք: Թեկնածուի գրանցումը մերժելու մասին հաշվիչ հանձնաժողովի որոշումը պետք է լինի պատճառաբանված:

14. Թեկնածուի գրանցումը մերժելու մասին հաշվիչ հանձնաժողովի որոշումը կարող է երկու օրվա ընթացքում բողոքարկվել Պալատի նախագահի տեղակալին:

15. Ինքնաառաջադրման վերաբերյալ դիմումը պետք է ներկայացվի մարզային հաշվիչ հանձնաժողովին ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ հասցեով կամ էլեկտրոնային նամակով՝ info@advocates.am հասցեով (ստորագրության պարտադիր առկայությամբ):

«Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգը և անհրաժեշտ այլ տեղեկությունները կարող եք ներբեռնել Պալատի www.advocates.am կայքէջից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմի ղեկավար